Արձանագրություն 2

ՀՀ ՖՆ կարիքների համար «ՀՀ ՖՆ-ԷԱՃԾՁԲ-18/4» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

ք. Երևան «26» դեկտեմբեր 2018թ.
Ժամը՝ 12:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ

Ա. Ասատրյան – ՀՀ ՖՆ պետական գնումների գործընթացի համակարգման վարչության գնման գործարքների հաշվառման բաժնի պետ-վարչության պետի տեղակալ

Անդամներ

Ա. Վարդանյան – ՀՀ ՖՆ տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքների ներդրման և զարգացման վարչության պետ,

Գ. Վարդանյան – ՀՀ ՖՆ տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքների ներդրման և զարգացման վարչության պետի տեղակալ,

Դ. Գրիգորյան - ՀՀ ՖՆ պետական գնումների գործընթացի համակարգման վարչության գնման գործարքների հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ,

Լ. Ավետիսյան - ՀՀ ՖՆ պետական գնումների գործընթացի համակարգման վարչության գնման գործարքների հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ,

Գնումները համակարգող

Ա. Աղաբաբյան - ՀՀ ՖՆ գործերի կառավարման վարչության գնումների գործընթացի կազմակերպման բաժնի գլխավոր մասնագետ

1. **Տեղեկություններ հայտերի բացման մասին**

Հայտերը բացվել են www.eauction.armeps.am կայքի միջոցով՝ հրավերի հրապարակվելու օրվան հաջորդող 9-րդ օրը ժամը 12:30-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0:

2. **Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և գտնվելու վայրերի հասցեների մասին**

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված «ՀՀ ՖՆ-ԷԱՃԾՁԲ-18/4» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը՝

Մասնակցի անվանումը	Տվյալները
«Այյունեթվորքս» ՍՊԸ	ՀՎՀՀ՝ 02588485, հասցե՝ ք. Երևան, Պուշկինի փող., 38/1 շենք, շինություն 55, էլ հասցե՝ sales@iunetworks.am

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

3. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին

Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը ներկայացված են սահմանված պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

«ՀՀ ՖՆ-ԷԱՃԾՁԲ-18/4» ծածկագրով ընթացակարգի մասնակցի կողմից առաջարկված գները ներկայացվում են ստորև՝

Հ/Հ	ԳՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Պայմանագրի կատարման համար առաջարկվող գները (ՀՀ դրամ)		
		«Այյունեթվորքս» ՍՊԸ		
		Արժեք	ԱԱՀ	Առաջարկված գին
1	էլեկտրոնային գնումների Armeps համակարգի ծրագրային ապահովման սպասարկման ծառայություններ (նախահաշվային արժեք՝ 50 733 000 ՀՀ դրամ)	42 277 250	8 455 450	50 732 700
2	էլեկտրոնային գնումների պլանավորման, պայմանագրերի կառավարման և գնումների հաշվետվողականության Armeps/ppcm համակարգի ծրագրային ապահովման սպասարկման ծառայություններ (նախահաշվային արժեք՝ 50 949 000 ՀՀ դրամ)	42 457 500	8 491 500	50 949 000

Հանձնաժողովը որոշեց.

1. Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Այյունեթվորքս» ՍՊԸ-ին:
2. Ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

3. Հարցում կատարել ՀՀ պետական եկամուտների կոմիտե «Այյունեթվորքս» ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների և «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0:

5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը

«ՀՀ ՖՆ-ԷԱՃԾՁԲ-18/4» ծածկագրով ընթացակարգի գնահատման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել հրավերի փաստաթղթերի ներկայացման և եզրակացության ներկայացման օրվանից հետո ՀՀ ֆինանսների նախարարության վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Մ. Ադամյան 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Ա. Ասատրյան

հանձնաժողովի անդամներ՝ _____ Ա. Վարդանյան

_____ Գ. Վարդանյան

_____ Դ. Գրիգորյան

_____ Լ. Ավետիսյան

Գնումները համակարգող ՝ _____ Ա. Աղաբաբյան